

Նուարդ Վարդանեան, Ալվարդ Սեմիրջեան-Բեքմէզեան, Նարինէ Վարդանեան, Հայ Ժողովրդական Եւ Գրական Հեքիաթի Արդի Հիմնախնդիրները, Երեւան, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական Միջազգային Կենտրոն, 2015, 288:

Վաղուց անցել են այն ժամանակները, երբ մարդիկ հաւաքուում էին ոչ միայն շփուելու, գրուցելու, մտքեր փոխանակելու, այլեւ հոգեւոր-գեղագիտական պահանջմունքները բաւարարելու համար պատմում էին իրենց աւագներից լսած զանազան պատմութիւններ՝ գրոյցներ, վիպերգեր, հեքիաթներ, առակներ եւն.: Կապի եւ լրատուութեան ժամանակակից միջոցների բացակայութեան պայմաններում դա նպաստում էր ունկնդիրների աշխարհայեացքի ձեւաւորմանը, աշխարհի անցուդարձի, վարք ու բարքի մասին պատկերացումներ կազմելուն, չարի ու բարու մշտնջենական պայքարի, կեանքի ու մահու մասին իմաստասիրական մտորումների առիթ տալիս, օգնում աճող սերունդների դաստիարակութեանը, աշխատանքային առօրեայից յետոյ հետաքրքիր ժամանց ապահովում, կազմակերպում հանրոյթի մշակութային կեանքը:

Եւ այնուամենայնիւ, թէեւ յիշեալ ասանդական հեքիաթասացութիւնը այսօր գրեթէ մարել է, հեքիաթը շարունակում է մնալ ժամանակակից երեխաների ամենասիրուած ընթերցանութեան առարկան, շարունակում է յուզել ու գերել ամենատարբեր տարիքի մարդկանց: Այդ է պատճառը, որ ընթերցանութեան մերօրեայ սակաւութեան ժամանակներում դեռեւս հրատարակուում են հեքիաթների ժողովածուներ՝ ժողովրդական-ասանդական հեքիաթների հեղինակային մշակումներ, տարբեր հեղինակների հեքիաթի սեռի գրական ստեղծագործութիւններ:

Հենց այս՝ մերօրեայ պայմաններում ժողովրդական եւ գրական հեքիաթի գոյատեւման, շարունակման, զարգացման թէ մոռացութեան խնդիրներին, դրանց լեզուաոճական առանձնայատկութիւնների լուսաբանմանն է նուիրուած ՀՀ ԿԳՆ գիտութեան պետական կոմիտէի եւ ՀՀ նախագահի հովանու ներքոյ իրականացուող երիտասարդ գիտնականների աջակցութեան ծրագրի ֆինանսատրամաբ կատարուած եւ հրատարակուած *Հայ Ժողովրդական Եւ Գրական Հեքիաթի Արդի Հիմնախնդիրները* հաւաքական ուսումնասիրութիւնը՝ Նուարդ Վարդանեանի, Ալվարդ Սեմիրջեան-Բեքմէզեանի եւ Նարինէ Վարդանեանի հեղինակութեամբ:

Մերօրեայ ժողովրդական հեքիաթի կենցաղավարման հիմնախնդիրներին ծաւալուն անդրադարձ է կատարել բանագէտ Նուարդ Վարդանեանը: Վերլուծութիւնն ու եզրայանգումները կատարուած են հիմնականում իր, նաեւ որոշ գործընկերների եւ համախոհների ուժերով շուրջ 10 տարուայ բանահաւաքչական պրպտումների արդիւնքում գրառուած 125 հեք-

իաթների հիման վրայ: Սա բաւական լուրջ թիւ է, եթէ հաշուի առնենք արդի հեքիաթասացութեան գրեթէ մեռնող, մարող վիճակը. տարեցները, որոնք իրենց մանկութեան տարիներին կարող էին լսած լինել աւագներին, այժմ իրենք են աստիճանաբար հեռանում աշխարհից: Հագուադէպ են երիտասարդներ՝ նրանց թոռները, որոնք կարող են կամ ցանկութիւն ունեն վերարտադրել տատիկ-պապիկներից լսածը:

Ժամանակակից զարգացած շատ երկրներում հեքիաթասացութեան աւանդոյթները չկորցնելու համար նոյնիսկ դասընթացներ են կազմակերպում, դերասան-հեքիաթասացները շրջում են մանկական ժամանցի վայրերում, հեքիաթներ պատմում մանուկներին: Բայց այս արհեստածին երեւոյթը հեռու է երբեմնի հեքիաթասացութեան աւանդոյթներից, երբ պատմութիւնները փոխանցում էին սերնդէսերունդ առանց արհեստական ջանքերի:

Հեղինակը ներկայացրել է այդ սերնդի վերջին պատահիկներից միքանի առաւել աչքի ընկնող, պատմելու անուրանալի ծիրքով օժտուած եւ բաւական ընդարձակ հեքիաթացանկ ունեցող բանասացների, ներկայացրել ժողովրդական նիւթի հանդէպ նրանց մօտեցման կերպը, ժողովրդական հաւաքական ստեղծագործութեանը մասնակից լինելու նրանց ներկայացրած յայտը եւ կարողութիւնը: Հեքիաթն արդէն իսկ ընկալուել է իբրեւ ոչ-իրական, մտացածին, երեւակայական պատմութիւն: Բայց եթէ հնում որոշ հրաշագործ, կախարդական առարկաների եւ այնկողմնային զօրութիւնների հանդէպ ինչ-որ հաւատ կար, ապա այսօր բանասացները յաճախ անտեսում, դուրս են նետում դրանք՝ իրենց պատմութիւններին աւելի հաւաստիութեան երանգ հաղորդելու համար: Եւ երբեմնի հրաշապատում հեքիաթի դիպաշարը, կորցնելով հրաշապատում տարրերը, վերածում է իրապատումի: Այսպէս տեղի է ունենում աւանդական հեքիաթի քայքայումը: Քննութեան ենթակայ հեքիաթների դասակարգումը լիովին արտացոլում է ներկայ ժամանակների հետաքրքրութիւնների շրջանակը. 125 հեքիաթների գերակշիռ մասը՝ 84ը, իրապատում են՝ առաւելապէս արկածային, երգիծական, կենցաղային, խոհախրատական բովանդակութեամբ: Հրաշապատումներում հրաշքի աւանդական ընկալումը իմաստաւորուել է քրիստոնէական գաղափարաբանութեան ազդեցութեամբ՝ հրաշքի առկայութիւնն իր բացատրութիւնն է ստանում աստուածային կամքի կամ Քրիստոսի անմիջական միջամտութեան գործօնով, թէեւ այս միտումն առկայ է աւելի վաղ գրառումներում եւս: Երբեմն հեքիաթի հրաշագործ օգնականի փոխարէն հանդէս է գալիս հենց Քրիստոսը կամ քրիստոնէական որեւէ սուրբ:

Դիպաշարային բազմազանութիւնը զիջում է աւանդականին, բայց տարածուած, սիրուած դիպաշարերը համընկնում են, թէեւ որոշ աւանդական դիպաշարեր բացակայում են ներկայ բանասացների հեքիաթացանկերից, ըստ՝ մարդկանց հետաքրքրութիւնների ոլորտի

տեղաշարժերի: Պահանջարկ են վայելում իրապատում հեքիաթներում ճարպկութեամբ ու խաբէութեամբ հարստանալու թեմաները. բանասացները երբեմն իրենք էլ զուգահեռներ են տանում ներկայ ժամանակների հետ: Էապէս պակասել են կրօնաւորների մասին պատումները՝ հոգեւորականութեան գործառոյթների ոլորտի նեղացման, ժամանակակից հանրոյթում նրանց դերի նուազեցման պատճառով: Քիչ են նաեւ կենդանական հեքիաթները՝ ամենահին, հնամենի շերտը հեքիաթի սեռի տիրոյթում, կենդանական կերպարները շարունակում են կիրառուել առաւելապէս առակներում, առակատիպ գրոյցներում եւ անեկդոտի սեռում:

Թուով ամենաշատը ճակատագրի թեմայով հեքիաթներն են՝ 12 նմուշ, ընդ որում՝ որոշ ասացողներ այդ թեմայով պատմել են երկու, նոյնիսկ երեք հեքիաթ: Ճակատագրի հաւատալիքը գալիս է վաղնջական ժամանակներից, ըստ որի՝ մարդուն ծնուելիս շնորհում է իր ճակատագիրը՝ լաւ կամ վատ, եւ դրանից հնարաւոր չէ խուսափել: Այս հնամենի հաւատալիքը յատուկ է աշխարհի բոլոր ժողովուրդներին եւ գործուն է նաեւ մեր օրերում. շատերի նման բանասացներն էլ հաւատում են նախասահմանաձութեանը եւ իրենց պատմութիւններից յետոյ կենդանի օրինակներ բերում կեանքից: Ճակատի գիր են նկատում ճակատի վրայի գծերը, կեանքի կարեւորագոյն կանխորոշումների մասին են վկայում նաեւ ափի միջի գծերը, որոնցով փորձում են գուշակութիւններ անել մարդու ապագայի մասին:

Արդի բանագիտութեան համար խիստ արդիական է գրական եւ բանահիւսական հեքիաթի փոխառնչութիւնների հարցը: Աւանդաբար այն քննարկուել է գրական ստեղծագործութիւնների վրայ ժողովրդական բանահիւսութեան ազդեցութեան տեսանկիւնից, գրական հեքիաթի՝ ժողովրդականի հիմքի վրայ ստեղծուած լինելը կամ ժողովրդականի՝ հեղինակային մշակման ենթարկուելը: Բայց ներկայ համատարած գրագիտութեան, զանգուածային տեղեկատուական միջոցների ժամանակներում առաջանում է հակադարձ ազդեցութեան խնդիրը՝ գրական հեքիաթի՝ ժողովրդականի վրայ ներազդելու ոչ միայն հնարաւորութեան, այլեւ անխուսափելիութեան առումով: Մանկուց կամայ թէ ականայ բոլորին հասու են Թումանեանի, Աղայեանի հեքիաթները եւ դպրոցական ուսուցման ծրագրերով, եւ հեռուստատեսիլով ցուցադրուող բազմանկարներով: Այս տեսակէտից ուսումնասիրութեան մէջ արժարձուող հարցադրումները շատ արժէքաւոր են եւ նոր հայեացք են սփռում մերօրեայ բանահիւսական իրականութեան վրայ:

Արդի հայ գրական հեքիաթի սեռի եւ բանաստեղծականութեան առանձնայատկութիւններին է անդրադարձել գրականագէտ Սեմիրջեան-Բեքմէզեանը: Քննութեան են առնուել յետխորհրդային շրջանում հայ գրողների՝ հեքիաթի սեռով գրուած ստեղծագործութիւնները, որոնց մի

մասը պայմանականորեն միայն կարելի է անուանել հեքիաթ, որքանով որ այն ներառել է ամանդական հեքիաթի պոէտիկայի բնորոշիչները՝ չափազանցություն, այլաբանություն, հրաշապատում: Եթէ ժողովրդական հեքիաթը հաւաքական ստեղծագործություն է, որը ամանդուել է սերնդէսերունդ եւ սովորաբար ասացողի անհատական ապրումներն ու խոհերը չի արտացոլում, կամ արտացոլում է լոկ այնքանով, որքանով որ դրանք համապատասխանում են հանրոյթի տրամադրութիւններին, ապա գրական հեքիաթը՝ ստեղծուած ամանդականի յենքի վրայ, կրում է հեղինակի անհատականութեան խոր կնիքը, արտայայտում նրա անձնական մտորումները կեանքի փիլիսոփայութեան մասին, վերաբերմունքը հասարակութեան մէջ տեղ գտած արատաւոր յարաբերութիւնների, ընկերային անարդարութեան հանդէպ: Ժամանակակից գրական հեքիաթը մի իրատեսակ համադրութիւն է ամանդականի եւ նորի, իրականի եւ գերբնականի, ընդհանրականի եւ խիստ անձնականի, այն - ի տարբերութիւն բանահիւսական հեքիաթի - արտացոլում է հերոսների ներաշխարհը, նրանց ապրումները, իրադարձութիւնների նկատմամբ նրանց վերաբերմունքը՝ համահունչ այսօրուայ մեր ընկալումներին:

Ուշագրաւ է հեղինակային հեքիաթի դասակարգումն ըստ ամանդական նիւթի հանդէպ իրատեսակ մօտեցման. բանահիւսական հեքիաթի յենքի վրայ ստեղծուած նոր հեղինակային հեքիաթներ՝ բանահիւսական հեքիաթի պոէտիկայի կանոններով (Վահագն Գրիգորեանի *Հեքիաթների Գիրքը*, Երագիկ Գրիգորեանի «Ձերդ Գերազանցութիւն Վատ Կախարդ Պառաւ», Էդուարդ Միլիտոնեանի «Արքայադուստր Թարսինէն», «Շաքարաւազ Արքայազնը» ստեղծագործութիւնները), ամանդական ժողովրդական հեքիաթների հեղինակային մշակումներ (Լեւոն Խեչոյեանի *Տան Պահապան Հրեշտակը* ժողովածուն), **Ֆենթազի** ժանրանուանման տակ դասակարգուող, լրիւ նոր, գերբնական աշխարհի ստեղծելուն միտուած ստեղծագործութիւններ (Արմինէ Անդայի *Անկիմիդի Բնակիչները* հեքիաթ-վէպը), ամանդական բանահիւսական եւ գրական հեքիաթների վերաիմաստաւորում եւ քայքայում նշանաւորող ստեղծագործութիւններ (Արփի Ոսկանեանի «Կարմիր Գլխարկով Գայլը», Արմէն Օհանեանի «Կիկոսի Վերադարձը»):

Բանահիւսական եւ գրական հեքիաթի լեզուաոճական առանձնայատկութիւնների քննութիւն է կատարել լեզուաբան Նարինէ Վարդանեանը: Այդ երկու տեսակների համեմատական քննութիւնն ընդգծում է դրանց ընդհանրութիւններն ու տարբերութիւնները: Բանահիւսական հեքիաթի լեզուն ժողովրդախօսակցական է, բարբառային, սեղմ է, զուսպ, պարզ, դիպուկ, կենդանի, առանց էական նկարագրութիւնների ու բնորոշումների: Բանահիւսական հեքիաթների գրական մշակումները հիմնականում պահպանում են ժողովրդախօսակցական լեզուն, բայց սովորաբար խոյս են տալիս խիստ

բարբառային, խրթին ու դժուարամատչելի բառերից ու արտայայտություններից: Հեղինակային հեքիաթի լեզուն գրական արդի հայերենն է, ոճն արտացոլում է հեղինակի լեզուամտածողութեան իրայատկությունը: Ժողովրդախօսակցական որոշ տարրեր ներմուծում են՝ ստեղծելու հեքիաթային բնորոշ միջավայրը, դրանք առկայ են յատկապես հերոսների ուղղակի խօսքում, միախառնում նաեւ արդի խօսակցական հայերենում կիրառուող *ժարգոնային* արտայայտություններին եւ օտարաբանություններին, որոնք անհատականություն են հաղորդում հեքիաթի հերոսներին, բնորոշում նրանց ընկերային միջավայրն ու ծագումը, մասնագիտական գործունեությունը, տալիս խօսքին ուժականություն, կենդանի, աշխուժ բնոյթ:

Աւանդական հեքիաթի բացող ու փակող բանաձեւերը առկայ են նաեւ հեղինակային հեքիաթներում՝ ենթարկուելով որոշ ոճական փոփոխությունների, ըստ՝ հեղինակի ճաշակի եւ լեզուամտածական առանձնայատկությունների: Հեքիաթային միջավայրի ապահովմանն են միտում նաեւ աւանդական հեքիաթին բնորոշ միջանկեալ խօսքային բանաձեւային արտայայտությունների եւ ժողովրդական իմաստալից խրատական խօսքերի կիրառումը հեղինակային հեքիաթում (*օձն իր պորպոլ, հաքն իր թեւով, շապ են գնում թէ քիչ՝ իրենք կ'իմանան, թագաւորն ապրած կենայ, Աստուած բարին կատարի* են.), որոնք խօսքը դարձնում են կենդանի, պատկերաւոր, արտայայտիչ, հետաքրքիր:

Եթէ ժողովրդական հեքիաթներում գործող անձինք, վայրերը անորոշ-անանուն են, ապա հեղինակային հեքիաթում դրանք որոշակի անուն ու պաշտօն ունեն. թէեւ այդ անունները կարող են լինել մտացածին ու անիրական: Էսպէս տարբերում են կերպարակերտման սկզբունքները. ժողովրդական հեքիաթներում հերոսները ոչ թէ անհատականություններ են, այլ տիպեր, որոշակի հասարակական դիրք եւ դասային պատկանելություն, գործառոյթ են ներկայացնում՝ թագաւոր, արհեստաւոր, գիւղացի են.: Գրական հեքիաթներում եւս կան մասնագիտական-ընկերային կողմնորոշումներ, ընդ որում՝ արդի կեանքի բնոյթին համապատասխան՝ ուսուցիչ, գրող, բանուոր, պաշտօնեայ, բայց նրանք նաեւ անուն ունեն, անհատականություն, բնաւորություն: Գրական հեքիաթը զերծ է ժողովրդականին յատուկ կաղապարներից ու կարծատիպերից, թեմաների եւ շարադրանքի հարցում աւելի ազատ է, անկաշկանդ, կրում է հեղինակի ուրոյն երեւակայութեան եւ լեզուամտածողութեան կնիքը:

Մենագրութեան մէջ արծարծուած թեմաների արդիականությունն ու պարզ, յստակ լեզուական մատուցումը գիրքը մատչելի են դարձնում ոչ միայն մասնագիտական նեղ շրջանակների, այլեւ արդի հեքիաթի կենցաղավարման խնդիրներով հետաքրքրուողների համար:

ԵՒԱ ՉԱՔԱՐԵԱՆ
zakaryaneva@yahoo.com